ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«4» մարտի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ
Մ. Անանյան

ԳԲԽ-16/16 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 19.02.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 19.02.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Հեռախոսային կապի ծառայություններ» ձեռքբերման նպատակով կազմակերպված

«ՇՀԾՁԲ-15/25» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.02.2016թ. կայացած նիստով մերժել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը և առաջին տեղ զբաղեցնող է ճանաչել Ընթացակարգի մյուս մասնակցին՝ «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ին:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն նշել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումներն անհիմն են և չեն բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից:

Ընկերությունը, որպես վեճի առարկայի համար էական նշանակություն ունեցող փաստեր, նշել է հետևյալը.

✓ 29.01.2016թ. Ընկերությունը Պատվիրատուից ստացել է Ընթացակարգին մասնակցելու հրավեր: 09.02.2016թ. Ընկերությունը հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է հայտն էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով:

✓ Ընկերությունից բացի, Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ն:

✓ Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնի առաջարկները.

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն՝ ամսական 25 000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ն՝ 300 000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

✓ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն գնային առաջարկը ներկայացրել է ամսական կտրվածքով և արդյունքում երկու ընկերությունների գները հավասար են:

✓ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ըստ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի, ուսումնասիրել է Ընկերության գնի առաջարկը և առանց հետագա ուսումնասիրման և պարզաբանման, որոշում է ընդունել մերժել Ընկերության առաջարկը՝ պատճառաբանելով, որ ներկայացված գնի առաջարկում «Առաջարկված ընդհանուր գինը» սյունակում նշվել է 1 ամսվա ծառայության արժեքը, այլ ոչ ամբողջական գումարը):

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի ներկայացրած բողոքի փաստացի և իրավական հիմքերը.

Հրավերի 2-րդ մասի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 4.2-րդ կետի համաձայն՝

եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով: Ընկերությունը նշել է, որ Հրավերի ոչ մի դրույթով սահմանված չէ, որ գնային առաջարկը պետք է ներկայացված լիներ միայն տարեկան կտրվածքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Ընկերությունը հայտնել է նաև, որ գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակիցների հայտերը, պետք է նկատի ունենար մասնակիցների գնի առաջարկների հավասար լինելու փաստը, հաշվի առներ Օրենքի վերը նշված դրույթը և պետության շահերից ելնելով, ըստ էության, վերլուծեր Ընկերության առաջարկը և բավարար գնահատեր այն:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների գնի առաջարկների հավասարության դեպքում մասնակիցների հետ վարվում են գնի նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Ընկերությունը նշել է, որ գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, բաց է թողել գների նվազեցման հնարավորությունը:

Այսպիսով, «ԱրմենՏել» ՓԲԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովը, պատշաճ կարևորություն չտալով գնումների տնտեսող և արդյունավետ իրականացման սկզբունքին, չի կատարել Օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասով սահմանված պահանջները, ինչի արդյունքում հանգել է սխալ եզրակացության և կայացրել սխալ որոշում:

Հաշվի առնելով վերոգրյալը «ԱրմենՏել» ՓԲԸ-ն խնդրել է՝

1. Դադարեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «ՇՀԾՁԲ-15/25» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. փետրվարի 9-ի նիստի արձանագրությամբ կայացված՝ «ԱրմեՏել» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ին առաջին տեղը զբաղեցնող ճանաչելու մասին որոշումները:

2. Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՇՀԾՁԲ-15/25» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

2. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 24.02.2016թ. գրությամբ ներկայացրել է «ՇՀԾՁԲ-15/25» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ, վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը հրավերով մասնակիցներին տրամադրել է հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը և համապատասխան ձևաթուղթը: Այն անհրաժեշտ էր լրացնել հանձնաժողովի տրամադրած ձևաչափով՝ համաձայն ՀՀ կառավարության 168-Ն որոշման 35-րդ կետի 2-րդ ենթակետի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

3. <u>ԳԲԽ-16/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-16/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՀԾՁԲ-15/25» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԱրմենՏել» ՓԲԸ-ն և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի Հրավերի Հավելված N 2 վճարման ժամանակացույցով նախատեսված է եղել հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերումը ֆինանսավորել՝ փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար:

3. Հրավերի 2-րդ մասի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 4.2-րդ կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է ***գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:***

4. Հրավերի N 4 հավելված գնային առաջարկի օրինակելի ձևն է.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				

5. «ԱրմենՏել» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկով նշել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված «ՇՀԾՁԲ-15/25» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով՝

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը ամսական /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	«հեռախոսակապի ծառայություններ N1» գնային առաջարկը ներկայացված է 100 հեռախոսահամարի համար ամսավճարի՝ բաժանորդային վարձի, մասով, ***1 (մեկ) ամսվա կտրվածքով:*** 1 (մեկ) հեռախոսահամարի բաժանորդային վարձը կազմում է 300 (երեք հարյուր ՀՀ դրամ), սակագնային փաթեթ «XXL»: Անհրաժեշտության դեպքում հեռախոսների տրամադրմամբ առաջարկում ենք սակագնային փաթեթ «Կոնստրուկտոր» կցված է:	13 750	11 250	5000	30 000 (երեսուն)

	Մատուցվելիք ծառայություններ ցանկը ներառյալ բացադրիչների հաշվարկը ներկայացվում է տեխնիկական բնութագրին կից ցանկով:				

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. փետրվարի 9-ին կայացած նիստի արձանագրության 4-րդ կետով կայացվել է որոշում, համաձայն որի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը մերժվել է՝ Ընկերության գնային առաջարկը սխալ կազմված լինելու հիմքով (ներկայացված գնի առաջարկում «Առաջարկված ընդհանուր գինը» սյունակում նշվել է 1 ամսվա ծառայության արժեքը, այլ ոչ ամբողջական գումարը):

4. ԳԲԽ-16/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 19.02.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 24.02.2016թ. գրությունը և կից փաստաթղթերը, «ՇՀԾՁԲ-15/25» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 35-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա ***մասնակիցը գնային***

<u>առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:</u>

Կարգի 44-րդ կետի՝

• 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են ***հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը*** կամ հայտի ապահովումը.

• 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները):

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 76-րդ կետի՝

• 15-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովի կողմից որոշվում են բավարար գնահատված մասնակիցները: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են,

• 16-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ օրենքի 9-րդ և 33-րդ հոդվածների համաձայն կնքվում է պայմանագիր:

Հրավերի 7.2.1 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի 2-րդ մասի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 4.2-րդ կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է ***գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:***

Տվյալ դեպքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը՝ Ընկերության գնային առաջարկը սխալ կազմված լինելու հիմքով, պահպանել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Հրավերով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի Հրավերով նախատեսվել է գնային առաջարկը ներկայացնել մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով, մինչդեռ Ընկերությունը հայտի հավելված N 4 գնի առաջարկում նշել է պայմանագրի կատարման համար ընդհանուր գինը՝ ամսական կտրվածքով, որը կազմել է 30 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), արդյունքում խախտելով՝ Կարգի 35-րդ կետի 7-րդ ենթակետի և Հրավերի 2-րդ մասի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 4.2-րդ կետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է վարեր ներկայացված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ, ապա հայտնում ենք, որ Կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն բանակցությունները վարվում են միայն ***բավարար գնահատված*** հայտեր ներկայացրած մասնակիցներին որոշելու առկայության

պայմաններում և տվյալ դեպքում «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը բավարար չի գնահատվել, քանի որ հայտով ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանել հրավերով նախատեսված պայմաններին, ուստի նման հայտը ենթակա է մերժման, ինչի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չէր կարող ներկայացված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարել:

Գտնում ենք, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԾՁԲ-15/25» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 2016թ. փետրվարի 9-ին կայացած նիստի արձանագրությամբ կայացված՝ «ԱրմեՏել» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ին առաջին տեղը զբաղեցնող ճանաչելու մասին որոշումները դադարեցնելու պահանջի վերաբերյալ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 19.02.2016թ. ներկայացրած բողոքը անհիմն է:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 19.02.2016թ. ներկայացրած բողոքը մերժել՝ անփոփոխ թողնել «ՇՀԾՁԲ-15/25» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. փետրվարի 9-ին կայացած նիստի արձանագրության 4-րդ կետով կայացված որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-16/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան